Հաստատում եմ
Տնօրեն Է. Բաղդասարյան
01.09.22

# ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

# ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

## 2022-2023 ՈՒՍ ՏԱՐԻ

## 2-րդ դասարան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ `

Տնօրեն՝ _____

<< ——————>>

Արագածոտնի մարզ
Լուսագյուղի միջնակարգ դպրոց
2-րդ դասարան

Դասղեկ՝ Լարիսա Անդրեասյան

<<2022-2023>> ուս. տարի

*ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ*

Տեղեկություններ աշակերտների մասին

## ԿՐԹԱԿԱՆ- ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)՝ 2022-2023 ուս. տարում երկրորդ դասարանում սովորում է տասը աշակերտ՝ հինգ տղա և հինգ աղջիկ:

երկրորդ դասարանի աշակերտները շատ աշխույժ, ընկերասեր երեխաներ են : Ակտիվ մասնակցություն ենցուցաբերում միջոցառումներին:

**Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում՝** 2022-2023 ուստարին նախատեսել եմ սկսել <<Գիրքն իմ լավագույն ընկերն է>>:

<<Համաճարակային կանոնների պահպանումը դասասենյակում>>թեմայի շուրջ: Ուստարվա ընթացքում դաստիարակչական աշխատանքների պլանավորման մեջ ներառել հայեցի դաստիարակության ողջ կետերը: Կազմակերպել միջոցառումներ, էքսկուրսիաներ: Անընդհատ պահել
դպրոց-ուսուցիչ–ծնող – աշակերտ կապը:

**Հայեցի դաստիարակություն**

Դաստիարակություն, որոշակի տեխնոլոգիաների համակարգ, որն ուղղված է երեխայի անձի նպատակաուղղված ձևավորմանը: Հասարակական, արտադրական, մշակութային կյանքին նախապատրաստելու համար: Դաստիարակությունը իրականացվում է ընտանիքի և դպրոցի համատեղ գործունեության ընթացքում, նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններում, մանկական, երիտասարդական, հասարակական
կազմակերպություններում:Դաստիարակությունը հասարակական կյանքի համընդհանուր անհրաժեշտ կատեգորիա է: Սերտորեն կապված է ուսուցման հետ:

**Հոգևոր դաստիարակություն՝** Աշակերտների հոգևոր դաստիարակության համար պետք է զրույցներ անցկացնել եկեղեցական տոների թեմաներով, կազմակերպել միջոցառում՝ << Սուրբ Զատիկ >>թեմայով: Սովորեցնել ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔԸ





**Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն՝** կազմակերպել թեմատիկ միջոցառումներ ուսուցանել հայրենասիրական երգեր:

**Գեղագիտական դաստիարակություն**: Գեղագիտական դաստիարակությունը կազմում է մարդու ընդհանուր զարգացածության զգալի մասը: Որքան խորն է գեղագիտական ընկալումը, այնքան ամուր է մարդ-արվեստ, մարդ-բնություն կապը: Սակայն արդի ժամանակներում այն կարծես անուշադրության է մատնվում, հետին պլան է մղվում ու գնալով նվազում է: Որքանո՞վ եք կարևորում մարդու գեղագիտական դաստիարակությունը: Ո՞ր հասակից և ինչի՞ց է պետք սկսել այն: Ի՞նչ աղբյուրներից է մարդն ստանում այդ դաստիարակությունը, արդյո՞ք բավարար հիմքերի վրա են այդ աղբյուրները: Եվ ընդհանրապես. ի՞նչ մակարդակի վրա են ներկայիս հայ մարդու գեղագիտական դաստիարակությունը: Այս բոլոր հարցերի պատասխանները կտանք և կունենանք դասղեկի ժամերին

:

**Ֆիզիկական դաստիարակություն**:Ֆիզիկական դաստիարակությունը անձնավորության համակողմանի ներդաշնակ զարգացման կարևոր բաղադրիչ է: Ֆիզիկական դաստիարակության նպատակն է ժամանակին ձևավորել երեխաների շարժողական կարողություններն ու հմտությունները, զարգացնել հետաքրքրություն՝ երեխային մատչելի շարժողական գործունեության զանազան ձևերի նկատմամբ, դաստիարակել անձի բարոյակամային հատկանիշներ, որի իրագործման համար դպրոցում լուծվում են մեկը մյուսի հետ սերտորեն կապված հետևյալ խնդիրները.

- Առողջության պահպանում և ամրապնդում.
- Օրգանիզմի կոփում, ճիշտ կեցվածքի , ձևավորում, հարթաթաթության կանխում.
- Անձի բարոյակամային որակական գծերի՝ ինքնուրույնության, ակտիվության, մարդկային փոխհարաբերության կուլտուրայի դաստիարակում.
- Ֆիզիկական որակների ձևավորում՝ ճարպկության, արագաշարժության, դիմացկունության, ուժի զարգացում, կատարելագործում.
- Կենսականորեն անհրաժեշտ շարժողական կարողություններին հմտությունների ձևավորում. քայլքի, վազքի, ցատկի, սողանցելու, մագլցելու, նետելու ունակություններին հմտությունների մշակում.
- Խաղային գործողությունների տարրերի ուսուցում.
- Պարապմունքների օգտակարության, հիգիենիայի պահանջների ու գիտելիքների ձևավորումն կատարելագործում : Այն կիրագործվի դասղեկական ժամերին՝ ֆիզդադարների, սպորտային միջոցառումներին թե զրույցի միջոցով:



**Ընթերցասիրության սերմանում՝**

Կազմակերպել միջոցառում << Նվիրել գիրք >> խորագրով , որը կիրականացվի հայ անվանի մեծանուն գրող Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը:




"Տունն առանց գրքերի նմանվում է սենյակի՝ առանց պատուհանների" Հայնրիխ Սան

**Աշխատանքային դաստիարակություն՝**
Կազմակերպել շաբաթօրյակներ, հանձնարարել դասարանում ծաղիկներ աճեցնել և խնամել: Հանձնարարել օգնել մայրիկներին ու հայրիկներին,իսկ ես հետևողականկլինեմ նրանց աշխատանքներին:

**Բնապահպանական դաստիարակություն՝** Կազմակերպել էքսկուրսիաներ՝դեպի բնության գիրկը: Աշակերտներին բացատրել, թե որքան կարևոր է բնությունը պահպանելը:Խորհուրդ տալ սիրել ու խնամքով վերաբերվել ծառ ու ծաղկին և բնության յուրաքանչյուր մասնիկի:

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

1. Եկեք ծանոթանանք,Առողջ ապրելակերպ
2. Համաճարակային կանոնների պահպանումը
3. Անկախության օր
4. Ուսուցչի օր. բացիկների պատրաստում
5. Եղիշե Չարենցի 125 ամյակին նվիրված զրույց, <<Ես իմ անուշ Հայաստանի>> բանաստեղծության արտասանություն:
6. Իմ անվան ծագումնաբանությունը և նշանակությունը : Իմ անվանակից հայտնիները:
7. Ամենահայտնի ժամանակակից անունները: Ո՞վ և ինչո՞ւ է ընտրել իմ անունը:
8. Ինչպես վարվել <<Օդային տագնապ>> ազդանշանի դեպքում:
9. Հայաստանի զինանշանի և դրոշի պատմությունը:
10. Մեր երկրի օրհներգի ստեղծման պատմությունը
11. Ես և իմ դասընկերները:
12. Կոնֆլիկտների հաղթահարում (<Արի հաշտվենք>> պատմվածքի ընթերցում:
13. Զմեռը թակեց մեր դուռը:
14. Զրույց՝ <Ինչպես վարվել երկրաշարժի ժամանակ>: 1988թ ավերիչ երկրաշարժի մասին:
15. Ամանորյա հանդեսի նախապատրաստական աշխատանքներ: Ամանորյա հրաշքը:
16. .Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին ընդառաջ հանդիսություններ:
17. Հայոց բանակի օր:
18. Աշխատանքն է գեղեցկացնում մարդուն:
19. Իմ պարտականությունները դպրոցում և ընտանիքում: Ո՞ւմ եմ ես վստահում:
20. . <Թումանյանական օրեր>>, << Գիրք նվիրելու օր>>, <Մայրենիի օր>>:
21. Հայ մանկագիրների ստեղծագործություններ և քննարկումներ:
22. Դասասենյակի նախապատրաստում գարնանը: Բարև՛, գարո՛ւն:
23. Ցերեկույթ՝ նվիրված մայրիկների տոնին
24. Կոնֆլիկտների հաղթահարում:
25. Տեղեկություն <Զատիկ > եկեղեցական տոնի մասին: Զատկի ձվերի ձևավորում:
26. Միջմշակութային փոխըմբռնում: Հանդուրժողականության ուսուցում:
27. Շրջակա միջավայր: Պահպանենք մեր շրջակա միջավայրը:
28. Տեղեկություններ Հայոց Մեծ Եղեռնի մասին::
29. Երեխայի իրավունքները:
30. Տեղեկություններ մայիսյան տոների մասին:
31. Ուզում եմ, որ իմ հայրենիքը…
32. Իմ գյուղը և իմ բնակավայրը:
33. Տարեվերջյան հավաքույթ :Էքսկուրսիա:

*Դասարանի մասնակցությունը համադպրոցական միջոցառումներին*

| Անցկացման ժամկետը | Միջոցառման անվանումը | Անցկացման տեղը |
|---|---|---|
| 01.09.2022 | Գիտելիքի օր | Դպրոց |
| 20.09.2022 | <<Անկախության օր>>, կավճանկարչություն | Դպրոցի բակ |
| 05.10.2022 | Ցերեկույթ նվիրված ուսուցչի օրվան | Դպրոց |
| 23.12.2022 | Ամանորյա տոնահանդես | Դպրոց |
| 27.01.2023 | Հայոց բանակի օր | Դպրոց |
| 13.02.2023 | Տեառնընդառաջ | Դպրոց |
| 17.02.2023 | Թումանյան -154: Գիրք նվիրելու օր | Դպրոց |
| 9.03.2023 | Ցերեկույթ <Մարտի 8>> | Դպրոց |
| 08.04.2023 | Ծառատունկ | Դպրոց |
| 18.04.2023 | Սուրբ Զատիկ | Դպրոց |
| 25.04.2023 | <<Հայոց մեծ եղեռն>> հարգանքի տուրք | Դպրոց |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

## ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

| | Ազգանուն, անուն | հասցե | հեռախոս |
|---|---|---|---|
| Նախագահ | Հարությունյան Սյուզաննա | Գյուղ Լուսագյուղ | 098-41-52-20 |
| Անդամներ | Սարգսյան Հասմիկ<br><br>Ավետիսյան Մարգարիտ | Գյուղ Լուսագյուղ<br>Գյուղ Լուսագյուղ | 098-35-24-35<br><br>094-60-82-58 |

## ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

| Անցկացման օ/ա/տ | Քննարկվող հարցերը | Զրույցի համառոտ բովանդակությունը | Ծանոթություն |
|---|---|---|---|
| 9.09.2022թ | Կանաչ անկյան ձևավորում, աշակերտների սանիտարական վիճակի վերահսկում | Դասարանում ապահովել կանաչ անկյուն և հետևողական լինել երեխաների հիգիենային | |
| 15.10.2022թ | Տագնապի ազդանշանի դեպքում ինչես կատարել տարհանում դպրոցից | Լինել զգոն ու տվյալ դեպքում գործել ճիշտ՝ հետևելով կանոններին՝ լուրջ խնդիրնեիվ խուսափելու համար | |
| 22.10.2022թ | Ուշադրություն դարձնել ընթերցանությանը | Խրախուսել ընթերցանությունը | |
| 21.11.2022թ | Երեխաների վարքը դպրոցում, հաճախումներ | Լինել հետևողական | |
| 22,12,2022թ | Առաջին կիսամյակի ամփոփ ներկայացում | Լինել ավելի ուշադիր | |
| 24.02.2023թ | Կարևորել երեխաների հիգիենան և առողջ սնունդը | Լինել հետևողական | |
| 19.05.2023թ | ՈՒսումնական և կազմակերպչական հարցեր | Լինել հետևողական | |

| Դասագրքերի բաշխում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| N | Ա/Ա | Մայրենի | Մաթեմ | Կերպարվեստ | Ռ.լեզու | Շախմատ | Ֆիզկուլտ | ԵՇԱ | Տեխնոլոգիա | Երաժշտ. |
| 1 | Գրիգորյան Լիանա | + | + | + | + | + | + | + | + | + |
| 2 | Գրիգորյան Սվետլանա | + | + | + | + | + | + | + | + | + |
| 3 | Զաքարյան Մարիա | + | + | + | + | + | + | + | + | + |
| 4 | Զաքարյան Միսակ | + | + | + | + | + | + | + | + | + |
| 5 | Հարությունյան Արմեն | + | + | + | + | + | + | + | + | + |
| 6 | Ղազարյան Դավիթ | + | + | + | + | + | + | + | + | + |
| 7 | Ղազարյան Դավիթ | + | + | + | + | + | + | + | + | + |
| 8 | Մնացականյան Լուսինե | + | + | + | + | + | + | + | + | + |
| 9 | Վահանյան Անահիտ | + | + | + | + | + | + | + | + | + |
| 10 | Վահանյան Սարգիս | + | + | + | + | + | + | + | + | + |